

Էլենե Չաջանիձե

Իվանե Չավախիշվիլիի անվան

Թբիլիսիի պետական համալսարան,

Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան փոխհարաբերությունների կենտրոն

**ԵՐԿԼԵՉՎՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՅԻ ՄՏԱՎՈՐ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ**

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Տվյալ հոդվածի նպատակն է ընթերցողին ծանոթացնել երկլեզվության լեզվական զարգացման հետ կապված հիմնախնդիրները և այս հարցի մասին գոյություն ունեցած տեսակետները: Հոդվածում կքննարկվեն լեզվական զարգացման հետ կապված բիհեվիորիստական, կոգնիտիվիստական և կոնստրուկտիվիստական տեսությունները: Մրանք հարցեր են, որոնք անմիջական կապի մեջ են երկրորդ լեզվի ուսումնասիրման և անհատի մտավոր զարգացման հետ: Ներածականում համառոտ կքննարկենք երկլեզվության էությունը և կսահմանենք նրա տեսակները: Հիմնական մասը կվերաբերի երկլեզվության հարցին՝ մտավոր զարգացման հետ կապում, և կքննարկենք այն գործոնները, որոնք պայմանավորում են երկլեզու կրթության արդյունավետությունը: Եզրակացության տեսքով կներկայացնենք երկլեզու կրթության նշանակությունը անհատական ինքնաիրացման և մտավոր զարգացման հետ կապի մեջ:

Երկլեզվությունը և երկլեզու կրթությունը 20-րդ դարում դարձել է սուր բանավեճերի առարկա և գլոբալացման գործընթացին զուգահեռ, այն պահպանում է այս հրատապությունը և ավելի լայն հետաքրքրություն է առաջացնում հասարակության մեջ:

Բացված սահմանների, հեշտացված ինտեգրման, բարելավված կենսական պայմանների, ընդլայնված տեսադաշտի և ևս այլ հրապուրիչ հետևանքների հետ է զուգորդվում այսօր օտար լեզվի իմացությունը:

Երկլեզվություն տերմինի բազմաթիվ սահմանումներ գոյություն ունեն՝ ըստ նրա հետազոտման բնագավառների: Նախ՝ իրարից պետք է սահմանազատենք անհատական և սոցիալական երկլեզվությունը/բազմալեզվությունը:

Սոցիալական երկլեզվությունը սոցիոլեզվաբանության ուսումնասիրման առարկան է, և այն բնորոշ է բազմալեզու պետություններին (օրինակ՝ Բելգիա, Շվեյցարիա, Աֆրիկայի պետություններ): Իսկ երկլեզվությունը, որպես անհատական երևույթ, ուսումնասիրում են ինչպես կոգնիտային հոգեբանությունը, այնպես էլ հոգելեզվաբանության ոլորտը և

մանկավարժությունը: Անհատական երկլեզվությունը երևույթ է, որն արտացոլում է անհատի իրազեկությունները երկրորդ լեզվից: Այս տերմինի սահմանման մեջ ևս չկա գիտնականների միջև բացարձակ համաձայնություն: Ոմանք համարում են, որ երկլեզվայինը մարդ է, որն ունի կարողություն թեկուզ մի քանի բառ ասել օտար լեզվով, իսկ ոմանք համարում են, որ երկլեզվային է այն մարդը, որը նույն մակարդակով է տիրապետում երկու լեզուներին (Բլյումֆիլդ, 1993):

Լեզվական զարգացումը կապվում է երկլեզվության երկու քննարկված (սոցիալական/անհատական) տեսակների հետ, դրանք համագոյակցում են և լրացնում են միմյանց: Թեպետ, հոդվածի շրջանակներում ավելի շատ անհատական երկլեզվությունը կքննարկենք կոգնիտային զարգացման հետ կապի մեջ:

**Լեզվական զարգացում
(բիհեվիորիստական, կոգնիտիվիստական
և կոնստրուկտիվիստական տեսություններ)**

Լեզուն ինքնին չի զարգանում, այն անմիջական կապի մեջ է երեխայի ֆիզիկական, հուզական, կոգնիտային

ասպեկտների հետ: Երեխայի լեզվական զարգացումը երկարատև և բարդ գործընթաց է, որը ենթադրում է համապատասխան սոցիալական միջավայրի և մշակութային ֆոնի նախատեսում:

Լեզվի յուրացումը չի սահմանափակվում միայն որոշակի բառերի և քերականական կառույցների իմացությամբ, այս գործընթացին մասնակցում են ինչպես հնչյունական մասը, այնպես էլ իմաստային ասպեկտը (Վոուդ, 1988):

Այն մեխանիզմի պարզումը, որ ընկած է լեզվական զարգացման հիմքում, միայն 21-րդ դարի հիմնախնդիր չէ, այն հնագույն բանավեճային հարց է, որով ժամանակին հետաքրքրված են եղել անվանի լեզվաբաններ Հումբոլդտը և Ֆ.Դե Մոսյերը: Բացի լեզվաբաններից, այս հարցը հետաքրքրություն է առաջացրել նաև հոգեբանության մեջ, քանի որ լեզվական զարգացումը անմիջապես կապվեց երեխայի մտավոր զարգացման հետ (Մ.Քուրդիանի, դասախոսությունների դասընթացից, 2007):

Հոգեբանության մեջ նշված հարցի հետ կապված հայտնի են բիհեվիորիստական, կոգնիտիվիստական և կոնստրուկտիվիստական տեսությունները:

Հայտնի է Սկինների լեզվական զարգացման տեսությունը, որը նա ձևակերպել է 1957 թվականին: Այն բիհեվիորիստական մոտեցման արտահայտություն էր՝ կապված լեզվի ուսուցման հարցի հետ: Սկինների տեսությունը հիմնվում էր կառուցվածքաբան Լեոնարդ Բյումֆոլդի «Լեզվի տեսության» վրա (Բյումֆոլդ, 1933): Բյումֆոլդն այս աշխատության մեջ բոլորովին էլ չէր անտեսում լեզվի ուսուցման ընթացքում իմաստային նշանակությունը, թեպետ, համարում էր, որ իմաստային գույությունները լեզվական ձևավորման ընթացքում աննշան էր: Ըստ նրա, երեխան լեզու է սովորում նմանակման միջոցով, այնպես, ինչպես այլ մնացած ամենօրյա ակտիվությունները:

Ըստ Սկինների տեսության, երեխայի լեզվական զարգացումը կապված է խթանի և ամրապնդման հետ (կամ, եթե երեխային տրվում է խթան, բառի տեսքով,

այս բառը պայմանականորեն կապվում է որևէ իրի հետ, այդ դեպքում, հավանաբար այն կամրապնդվի):

Բիհեվիորիստ հոգեբանները համարում էին, որ լեզվի ձևավորման համար նշանակալի է երեք բան. կրկնությունը, ընդօրինակումը և սերտումը, այսինքն՝ երեխաները սովորում են այն, ինչը հասկանում են (Ալ-Ջեասեր, 2009):

Այս մոտեցման հակառակ կարծիք շատ շուտ առաջացավ հոգեբանության մեջ: Բիհեվիորիստներին հակադրվեցին կոգնիտիվիստները, որոնք համարում էին, որ միայն նմանակումը ուսանման գործընթացում բավական չէ: Կոգնիտային հոգեբանությունը առաջ քաշեց լեզվական զարգացման ընթացքում իմաստի դերը և նշեց, որ երեխայի մեջ հենց ծնվելուն պես կա նրա ներուժ, որ լեզու սովորի (Ռազի, 2007):

Նոամ Չոմսկին այս երևույթը կոչում էր լեզվի ձեռքբերման սարքավորում և համարում էր, որ երեխան ունի որոշակի բնածին կարողություն մշակել տեղեկությունները և ստեղծել ներքին կառուցվածքներ /language acquisition device/ LAD (Ալ-Ջեասեր, 2009):

Լեզվի ձեռքբերման բնածին կարողության շնորհիվ երեխան կարող է ասել այնպիսի բառեր և ձևավորել այնպիսի քերականական կառույցներ, որ նա դեռ չի լսել: Օրինակ, անգլերենում, ինչպես գիտենք, գոյություն ունեն կանոնավոր և անկանոն բայեր, որոնց ձևերը տարբեր կերպ են կազմվում: Երեխան անկանոն բայերի ձևեր է կազմում սովորականի նման. comed - came-ի փոխարեն, breaked - broke-ի փոխարեն և այլն: Նաև, երեխան լեզվի յուրացման սկզբնական փուլում նախադասություններ կազմելու համար կիրառում է մասնատված բառեր, թեպետ, լեզվաբանները նշում են, որ այս մասնատումը գուրկ չէ տրամաբանությունից (Մելիքիշվիլի, 2011): Քննարկենք, օրինակ, երեխայի այսպիսի արտահայտությունները.

1. Գավաթ բաժակ
2. Տոնակատարություն զգեստ
3. Մարիամ պայուսակ
4. Գլխարկ աթոռ
5. Գիորգի գնդակ

Տվյալ արտահայտությունները մասնատված բնույթի են, և մակերեսային մակարդակով դրանք միանման են (գոյական անուն + գոյական անուն), թեպետ, պետք է նշել, որ դրանք տրամաբանորեն կապվում են միմյանց հետ և փոխանցում ավելի խորքային իմաստաբանական հարաբերություններ.

1. Հումանշային կապակցություն (օրինակ՝ գավաթ և բաժակ)
2. Որոշչային (հնարավոր է, գուճորդական) հարաբերություն (տոնական զգեստ, զգեստ – տոնի համար ...)
3. Պատկանելություն (Մարիամի պայուսակը)
4. Տեղ (գլխարկն աթոռի վրա է)
5. Սուբյեկտ-օբյեկտի հարաբերություն (Գիորգին գնդակ է խաղում):

(Գամդրելիձե, 2003).

Ըստ քննարկված օրինակների, երևում է, որ երեխայի մեջ ի սկզբանե կան լեզու յուրացնելու տվյալներ: Նա կարողանում է դիտարկման և վերլուծության հետևանքով ընդգրկվել հաղորդակցության մեջ:

Երկրորդ լեզվի յուրացման հարցը քննարկում է նաև կոնստրուկտիվիզմի տեսությունը: Այն հիմնականում հիմնվում է Վիգոցկու և Պիաժեի աշխատությունների վրա: Վիգոցկին համարում էր, որ լեզվի յուրացման գործում շատ մեծ է սոցիալական դերը: Երեխան սովորում է հասակակիցների հետ հաղորդակցությամբ և ինտերակցիայով (Տաբատաձե, Շուբիթիձե, 2011):

Վիգոցկին համարում էր, որ լեզուն և մտածողությունը զարգանում են միմյանցից անկախ և միաժամանակ: Վերջում տեղի է ունենում դրանց միավորում և ինտերակցիա:

Լեզվի յուրացման գործընթացը անմիջականորեն կապված էր սոցիոմշակութային միջավայրի հետ, ինչը պայմանավորում էր անհատական տարբերություններ լեզվի յուրացման և մտածողության զարգացման տեսակետից:

Մտածողության զարգացման մեջ լեզվի մեծագույն դերն է ընդգծում նաև շվեյցարացի հոգեբան Ժան Պիաժեն: Նա, ի տարբերություն Վիգոցկու, պակաս ուշադրություն է դարձնում կոգնիտային զարգացման համար սոցիալական միջավայրի մեծագույն դերին: Նա

համարում է նաև, որ դեռ ընթանում է մարդու կոգնիտային զարգացման գործընթացը, և դրան համապատասխան տեղի է ունենում նաև լեզվական զարգացումը (երեխայի տարիքային-կոգնիտային դասակարգում):

Սոցիոմշակութային տեսության մասսայականացման մեջ մեծ է Միխեիլ Բախտինի ներդրումը, որը համարում էր, որ բոլոր լեզուները սոցիոգաղափարական ֆենոմեններ են և առօրյայում միայն սոցիալական ինտերակցիայի հետևանքով են առաջանում: Նրա համար նշանակալի են սոցիալական, մշակութային և քաղաքական համատեքստը լեզվի յուրացման գործընթացում:

Քննարկված տեսությունները բազմակողմանիորեն են վերլուծում լեզվական զարգացման հարցը: Դրանցից յուրաքանչյուրը կոնկրետ, տարբեր տեսանկյունից է մոտենում հիմնախնդրի էությանը: Մարդու լեզվական տվյալներն առավելագույն դեպքերում այնքան լայն են, որ նա ոչ միայն մեկ լեզվի է տիրապետում, այլ նա կարող է միաժամանակ խոսել երկու կամ ավել լեզուներով:

Երկլեզվությունը և կոգնիտային զարգացումը

Երկլեզու/բազմալեզու մարդն ունի երկու լեզվական համակարգ, որոնք նա ակտիվորեն կիրառում է: Նրանք կարող են հաղորդակցվել այս լեզուներով և առավելապես ունեն ավելի խորը իրազեկություններ:

Լեզվական համակարգերի ձևավորումը կապված է մարդու կոգնիտային զարգացման հետ:

Հասարակության մեջ հրատապ են այն հիմնախնդիրները, թե ինչպես է ներգործում երկլեզվությունը կոգնիտային զարգացման վրա: Գիտնականները և հետազոտողները փորձում են պատասխանել հասարակության մեջ ծագած հարցերին՝ համապատասխան դիտարկումներով և հետազոտություններով:

Թեպետ պետք է նշել, որ հետազոտությունը միշտ չի կարող լինել ճշգրիտ, քանի որ գոյություն չունի միալեզու և երկլեզու խմբերի ճշգրիտ

տարբերակում: Նրանք իրարից կարող են տարբերվել ինչպես սոցիալական դրությամբ, նաև, բացի լեզվական իրազեկություններից, այլ տվյալներով:

Մոտավորապես մինչև 1960 թվականը միանշանակորեն համարվում էր, որ երկլեզվությունը կոգնիտային զարգացման համար խոչընդոտող գործոն է և երկլեզվայինները քննարկվում էին որպես երկփեղկված անհատներ: Այնուհետև, ժամանակի ընթացքում այս հարցի հետ կապված տեսակետը փոխվեց: Այս փոփոխությունը միանգամից չի տեղի ունեցել, այն հիմնվել է մի շարք հետազոտությունների վրա, որ անց էին կացվում աշխարհի մասշտաբով: Գոյություն ունեն երկլեզվության ինչպես չեզոք, այնպես էլ դրական ցուցանիշներով հետազոտություններ:

Օրինակ, Ջոնսը (Ջոնս, 1959) հետազոտություն է անցկացրել Ուելսում 10-11 տարեկան 2500 աշակերտի շրջանում և արել եզրակացություն, որ միալեզվայինները կոգնիտային տեսակետից ավելի զարգացած են, քան երկլեզվայինները, թեպետ, իրենց հետազոտման անհամապատասխանությունը խոստովանել է ինքը, որ հետազոտման ժամանակ չի նախատեսել այն արտաքին գործոնները, որոնք նույնպես ներգործում են կոգնիտային զարգացման վրա: Նա չի նախատեսել աշակերտների սոցիալ-տնտեսական վիճակը իսկ այս գործոնի նախատեսումից հետո պարզվել է, որ երկլեզվայինների և միալեզվայինների միջև մտավոր զարգացման տեսակետից տարբերություններ չկան (Բեյքեր, 2010):

Երկլեզու կրթության հետ կապված այնպիսի տեսություններ գոյություն ունեն, որոնք հերքում են նրա դրական էֆեկտը: Այս տեսակետից գոյություն ունի «Հաշվեկշռի տեսություն», որի համաձայն երկու տարբեր լեզուներ համեմատված են կշեռքի նժարների հետ, մեկի ծանրացումը տեղի է ունենում մյուսի հաշվին, կամ, երբ մարդը մի լեզվից հասնում է հաջողության, դա ազդում է երկրորդ լեզվի թուլացման վրա (Բեյքեր, 2010):

Չնայած երկլեզվայինների կենտրոնացման բարձր կարողությանը, որոշ դեպքերում նրանց մոտ նկատվում է լեզուները խառնելու հիմնախնդիրը՝ մի

լեզվից մյուսին անցնելու պայմաններում: Այս երևույթը հայտնի է լեզուների միջև տեղափոխությունների անվանմամբ, այն անվանում են նաև «գաղտնագրի փոփոխություն» (Բյալիստոկ, 2007): Լեզվաբանության մեջ գաղտնագիրը կապվում է կոնկրետ լեզվի կամ բարբառի հետ (Վոուդ, 1988):

Երկլեզվության թեմայի քննարկման ժամանակ ծնողները հաճախ հետաքրքրվում են լեզուների շփոթման հարցով, իսկ երբ նման հիմնախնդրի են հանդիպում իրականում, օգնության համար դիմում են հոգեթերապևտի, երեխայի խոսքի խախտման հիմնախնդիրներով: Երկլեզու երեխաների մեջ գոյություն ունեն լեզուների շփոթման, ոչ ճիշտ քերականական կառույցների կառուցման և այսպես կոչված «լեզվական սալաթի» պատրաստման դեպքեր:

Օրինակ, երբ երեխան խոսում է ռուսերեն և վրացերեն նա կարող է ասել «Ես ուզում եմ вода» կամ էլ «Ես ուզում եմ ... » և կանգ առնի այն պատճառով, որ չի կարողանում հիշել դրա համապատասխան բառը, ինչի պատկեր նա ունի մտքում (Ֆ. Դե Մոսյուր): Կան նաև դեպքեր, վրաց-ռուսալեզու երեխան կիրառում է ոչ ճիշտ համակցություններ „დაჯობ-დაჯობი + სადის~ կամ էլ „ჩქარვებ-ჩქარვა+ სკორე~ (Մելիքիշվիլի, 2011):

Հոգեթերապևտի (Ն.Մեփարիշվիլի) տեսակետի համաձայն, նման տիպի «լեզվական սալաթի» առաջացումը երախայի մոտ ստեղծում է սթրեսային վիճակ, թեպետ դա մշտական չէ, դա ժամանակավոր է և հեշտորեն հաղթահարելի՝ ճիշտ մոտեցման և օգնության դեպքում:

Սթրեսն ընդհանուր առմամբ երկլեզվության ընդգծված բնութագրիչ չէ, այն անհատական երևույթ է բոլոր մարդկանց դեպքում, բացի այդ, մարդը սթրես կարող է վերապրել նաև այլ իրավիճակներում: Եթե լեզվի յուրացման ընթացքում ընտրվի ուսուցման ճիշտ տեխնոլոգիա և ընդգծված մոտիվացիա, լեզվական շփոթմունք այլևս չպետք է լինի:

Ինչ վերաբերում մի լեզվից մյուսին անցնելուն, որոշակի իրավիճակներում այս փաստը կարող է նորմալ և ընդունելի

լինել, օրինակ, երբ երկլեզվային մարդը երկլեզվայինների շրջապատում է, և նրանք կարող են հասկանալ երկու լեզուներով ասված բառերը, այդ դեպքում այս երևույթն անհարմար վիճակ չի ստեղծում:

Թեպետ, լինում են դեպքեր, երբ երկլեզվայիններն իրենք ևս զգում են ոչ հարմարավետություն մի լեզվից մյուսին անցնելիս և այդ պատճառով դրա համար ներողություն են խնդրում: Առանձնապես նշանակալի է այն փաստը, որ մի լեզվից մյուսին անցնելու հետ կապված հաճախ բացասական վերաբերմունք ունեն միալեզվայինները, նրանք համարում են, որ դրա պատճառը երկու լեզուներից ցածր իրազեկություն ունենալն է:

Մի լեզվից մյուսին անցնելը պատահական գործընթաց չէ, այն հաճախ գիտակցված է տեղի ունենում և մտածողության հետևանք է: Երկլեզվայինի համար լեզուներից մեկն է գլխավորը (թեպետ կան երկլեզվայիններ, որոնք կարող են լեզուների երկու համակարգերն էլ առանձին-առանձին կիրառել՝ սա լիարժեք երկլեզվություն է), որով նա ճիշտ է կառուցում քերականական կառույցները, այդ լեզուն գիտնականներն անվանում են նաև մատրիցային լեզու (Դիտրիխ, 2007) և համարում են, որ մի լեզվից մյուսին անցնելու հարցը միայն լեզվաբանական խնդիր չէ, այն ընդգրկում է նաև սոցիալական հարաբերություններ (խոսակիցների շրջանակ), հոգեբանական վիճակ և մոտիվացիայի գործոնը:

Բացի քննարկված չեզոք և նեգատիվ գործոններից, որոնք կապվում են երկլեզու կրթության և կոգնիտային զարգացման հետ, գոյություն ունեն նաև այնպիսի հետազոտություններ, որոնք երկլեզվության դրական կողմերն են մատնանշում և միևնույն ժամանակ այժի են ընկնում վստահելիությամբ:

1962 թվականին Լամբերտը և Պիլը անցկացրին հետազոտություն, որի համաձայն որոշվեց, որ երկլեզվությունը ոչ թե բացասաբար է ազդում երեխայի կոգնիտային զարգացման վրա, այլ նա նպաստում է մարդու գիտակցության զարգացմանը (Բեյքեր, 2010): Ուշագրավ է, որ այս հետազոտությունն արժանացել է ճանաչման, քանի որ այժի էր ընկնում

կատարելագործված մեթոդիկայով և վստահելիությամբ:

Պոտսդամի համալսարանի երկլեզվության հետազոտող Դե Բլազերը և Միլանի համալսարանի պրոֆեսոր Յուբին Աբուլթալերը, դիտարկման և հետազոտման հետևանքով ձևակերպել են տեսություն՝ կապված ուսուցման գործընթացում երկլեզվության օգտակար արդյունքների հետ:

Նրանք համարում են, որ մարդու ուղեղը պատրաստ է «տեղավորել» երկու կամ ավել լեզվական համակարգեր և իրացնել դրանք: Լեզու սովորելը մարդում է ուղեղը և երկար ժամանակ նպաստում նրա գործառությանն ունակություններին:

Բյալիստոկի վերջին ժամանակների հետազոտությունները ևս (Բյալիստոկ, 2007, 2009 / 2010) մատնանշում են երկլեզվայինների բացահայտ առավելությունը՝ միալեզվայինների համեմատ՝ մտավոր բարդ հարցերի վճռման ընթացքում (օրինակ՝ «Սայմոնի առաջադրանքը», «այժի արձագանքի առաջադրանքը...»): Բյալիստոկի հետազոտությունների համաձայն, երկլեզվայիններն ավելի արագ և կազմակերպված էին կարողանում վճռել նախանշված խնդրի բարդ մասը, քան միալեզվայինները: Թեպետ, պետք է նշել, առաջադրանքի մյուս մասերի հետ կապված արդյունքները միանման էին:

Բյալիստոկի հետազոտությունները ցույց են տվել, որ երկլեզվայինների ուղեղում վերահսկման և դասդասման կարողությունն ավելի վաղ տարիքում է զարգանում՝ միալեզվայինների համեմատ, և ծերության շրջանում նրանք ավելի երկար ժամանակ են պահպանում այս կարողությունը:

Երկլեզվայինների առավելությունն է կարողանալ կենտրոնանալ շերտավորված հասկացությունների և առարկաների վրա, այդ պատճառով դրանք բնութագրվում են մտածողության ավելի վերացականությամբ, ինչը համապատասխանում է կոգնիտային զարգացման բարձր մակարդակին:

Երկլեզվության արդյունավետությունը պայմանավորող գործոնները

Տրված հետազոտությունների վերլուծությունը միանշանակորեն հավաստիացնում է մեզ, որ երկլեզու

կրթությունը մտավոր զարգացման և հաջողության հասնելու արդյունավետ միջոց է:

Երկլեզվությունը կարող է ավելի դրական արդյունք բերել մարդուն, քան բացասական: Որոշ չափով փոխվել են նաև նրա հետ կապված կարծրատիպերը: 21-րդ դարում արդեն անհրաժեշտությամբ է պայմանավորված լեզուների ուսանումը և այն պարտադիր պայմաններից մեկն է դարձել մասնագիտական հաջողության հասնելու համար:

Որպեսզի երկլեզու կրթությունն ավելի դրական արդյունք ունենա, պետք է նկատի առնվեն այն նշանակալի գործոնները, որոնք ազդում են ընդհանրապես ուսուցման և յուրացման գործընթացների վրա:

1. Նախ՝ երկլեզու կրթության գլխավոր նպատակը պետք է լինի երեխայի մտածողության զարգացումը, մտահորիզոնի ընդլայնումը, նրա բաց լինելը համաշխարհային մշակույթի նկատմամբ:

2. Որպեսզի երկլեզու կրթությունը լավ արդյունք ունենա, պետք է մասնագետների կողմից կազմվի որակյալ ուսուցման մեթոդաբանություն:

3. Երկլեզու ուսուցման ներդրման ժամանակ ցանկալի է, որ նախատեսվեն երեխայի իրազեկությունները մայրենի լեզվից, նրա հոգեբանական պատրաստականությունը և տարիքային առանձնահատկությունները (Ն.Մեփարիշվիլի):

4. Երկլեզու ուսուցման արդյունավետություն են պայմանավորում նաև մոտիվացիան և իրացման հնարավորությունը (Օերեթելի): Եթե երեխան չի պատճառաբանված երկրորդ լեզվի ուսուցմամբ, նա կդժվարանա լավ արդյունքներ ցուցաբերել: Կարևոր է նաև, որ տեղի ունենա սովորած լեզվի իրացում, որպեսզի երկլեզվայինը կրկին չվերածվի

միալեզվայինի (օրինակ՝ էթնիկ ադրբեջանցիների համար, որոնք ապրում են Վրաստանում, վրաց լեզվի ուսանման պայմանների մեջ լավ է այն փաստը, որ նրանք ունեն այս լեզվի իրացման հնարավորություն՝ գոյություն ունեցած սոցիալական միջավայրում):

Եթե ընդհանրացնեն սրված գործոնները, երկլեզու կրթությունը պետք է լինի ոչ թե ինքնաբերական երևույթ, այլ լավ կազմված և մասնագետների կողմից պլանավորված գործընթաց:

Եզրակացություն

Քննարկված հետազոտությունների և տեսությունների նախատեսմամբ, երկլեզու կրթությունը միայն և միայն դրական է ազդում երեխայի (և ոչ միայն երեխայի) կոգնիտային զարգացման վրա՝ նրա արդյունավետ և ճիշտ մեթոդաբանությամբ իրականացման դեպքում:

Բազմաթիվ լեզուների գոյությունը պայմանավորում է բազմերանգ մշակույթ, իսկ մշակույթն այն ֆենոմենն է, որում ապրում է մարդը և որտեղ իրացվում է նրա ներուժը: Իսկ տարբեր մշակույթների ճանաչման մեջ միջնորդի դեր է ստանձնել լեզուն: Վիլիելմ Ֆոն Հումբոլդտը մարդու գիտակցության կարևորագույն գործունեություն էր համարում լեզուն: Այն մոտ է մարդու կյանքին և մտածողությանը, ապահովում է սերտ կապ մշակույթի և մարդու հոգևոր աշխարհի միջև: Լեզուն միջոց է արտահայտման և ինքնաիրացման:

21-րդ դարում միայն բազմակողմանիորեն զարգացած, ինտելեկտուալ, ազատ և ստեղծագործաբար մտածող մարդիկ են մրցունակ: Իսկ դեպի հաջող կարիերա ճանապարհն անցնում է բազմալեզու կրթության ճանապարհով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

Ալ-Ջասսեր, Լ-Ջեյսեր, 2011 - Abdulrahman.I, Al-Jasser, PSYCHOLINGUISTIC THEORIES OF LANGUAGE ACQUISITION AND THE SAUDI LEARNER OF ENGLISH masala mopovebulia veb-gverdidan:: www.freetechbooks.com/file-2011/language-acquisition-theories-page2.html 15/06/2011

Բագատրի 2010 – Ի.Բագատրի, Երկլեզու զարգացման վրա ներգործող գործոնները և երկլեզու կրթությունը, Երկլեզու կրթություն ամսագիր, №4:

Բեյքեր, 2010 – Կ.Բեյքեր, Երկլեզվության և երկլեզու կրթության հիմունքները, Թբիլիսի, Սախմեդո, 2010:

Բյալիստոկ, 2007 - Bialistok.E, Cognitive Effects of Bilingualism: HowLinguistic Experience Leads to Cognitive Change, International Journal of Bilingual Education and Bilingualism,Volume 10,Issue 3. 2007.

Բյալիստոկ, 2010 - Bialistok.E., International Journal of Bilingual Education and BilingualismVol. 13, No. 5, September, 2010.

Գամրելիձե, 2003 – Թ.Գամրելիձե: Լեզվաբանության ներածական դասընթաց, Թբիլիսի, ԹՂՀ հրատարակչություն, 2003.

Դիտրիխ, 2007 - Dietrich.R, *Psycholinguistik*. 2.Auflage.Verlag J.B.Metzler.Stuttgart, 2007.

Վոուդ, 1988 - Wode. H, Einfuerung in die Psycholinguistik. Max Hueber Verlag, 1988.

Սոսյուր, 2010 – Ֆ.Դե Սոսյուր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց (ըստ Մ.Քուրդիանիի դասախոսությունների գրառումների):

Տաբատաձե, Շուրիթիձե, 2010 – Շ. Տաբատաձե, Ի.Շուրիթիձե, «Երկրորդ լեզվի ուսուցման և յուրացման տեսություններ», Երկլեզու կրթություն ամսագիր, №4.

Շուրիթիձե, 2010, - Ի.Շուրիթիձե, Երկլեզվության կոգնիտային և սոցիալական առավելությունները, Երկլեզու կրթություն ամսագիր, № 3.

Վեր-ռեսուրսներ.

Բագատրի 2010 – Ի.Բագատրի, Երկլեզու զարգացման վրա ներգործող գործոնները և երկլեզու կրթությունը, [online] Bilingualedication.

Ռագ, 2006 - Ragg, M.(2006) ‘Gehirn und Geist: Mehrsprachigkeit macht schlau’[online].Reticon Available:http://www.reticon.de/nachrichten/gehirn-und-geist-mehrsprachigkeit-machtschlau_1240.html. [Accessed 30 April 2011]

Available:<http://bilingualeducation.ge/articles/id/69> . [Accessed 16 Juni 2011]

Տաբատաձե 2010 – Շ. Տաբատաձե, Ի.Շուրիթիձե, (2010) «Երկրորդ լեզվի ուսուցման և յուրացման տեսություններ»:

Available: <http://bilingualeducation.ge/articles/goto/2010-1>. [Accessed 6 Juni 2011]

Շուրիթիձե, 2010 - Shubitidze,I. (2010), Երկլեզվության կոգնիտային և սոցիալական առավելությունները:

Available: <http://bilingualeducation.ge/articles/id/11>. [Accessed 30 Juni 2011]

Elene Jajanidze

Ivane Javakhishvili Tbilisi State University; CCIIR

The influence of the bilingualism on the cognition of the Child Development

ABSTRACT

The aim of Present article is to introduce to the society the problems connected with the lingual development of bilingualism and considerations regarding the issue. There will be discussed the theories connected with lingual development of behavioral, cognitive and constructional theories. These issues are in a direct connection with the study of the second language and a person's cognitive development . We'll briefly review the main point of bilingualism and define its types.

The main part of this article refers to the issue of bilingualism concerning the cognitive development and we also discuss the factors conditioned by the efficiency of bilingual education. As s conclusion we will present the affect of bilingual education concerning personal self-realization and cognitive development.